

և ակատ, և սուտակ» պարբերութիւնը, որուն առաջին հանգն կամ ակն Գոնազմն է: Այս վկասութիւնը քացայախ որ ցուցութիւնը որ « Տօնական մատեան » ի մեր նախնի հեղինակ-ներն Գոտազմ և Լինգիրոն կամ Լիգուրիոն հոմանիշներ ընդունած են: բայց այս վկայութեան աւելի կարեւորութիւն կը սորուէր եթէ վկայող ոչ վերջնագարեան այլ հինգերորդ գարու կամ Ս. Գրիֆ թարգմանիչ հեղինակներն լինէին:

Լինգիրոնը Գոնազմի հոմանիշ համարելու ուրիշ հակասութիւն մ'ալ կայ: այսինքն սոյն Լինգիրոն անուամբ՝ կը հասկնան այն հանըթ՝ որ ըստ առասպեկին Լուսան [Lynx. Felis lynx] կենդանույ միզեն դոյցած է\*, բայց սոյն համարը Ս. Դրոգ մէջ յիշուած Ligurius, այսինքն բառին հետ սոյն համարելն պարզ ենթադրական է\*\*. իսկ ըստ Թէոփրաստի և Պինիոսի, այդ հանգն չէ Լինգիրոնն այլ

Կայծի Escarbooule նման հանք մ'է: ոմանք ինչպէս Ս. Նպիփան և Ս. Հերոնիմոն Ընթիր յակիթ Խաչինթե լա բելլ հանք կը կարծեն: Տարակոյ չի կայ որ Ligurius հանքը այս յիշեալ հեղինակաւոր անձանց յիշատակած հանքերէն մին պիտի ըլլայ քան թէ ումանց կարծած լիգուրիոնը որ ըստ առասպեկ-լին՝ անշնորդ գոյացութիւն մ'ունենալով չէր կրնար Նրէից քահանապահետի լանջանոցի՝ սրբազն և չնորհալի զարդն ըլլայ\*\*\*:

Արդ նոյն իսկ այս վերջին վկայութեան պիտին ըստ Պինիոսի, Թէոփրաստի, Հերոնիմոսի և Ս. Նպիփանու « Տօնական մատեան » ի մէջ յիշատակուած հանքէն տարրեր ըլլայով, կարելի չէ զայն Գոնազմի հոմանիշ համարել \*\*\*\*:

Վերոյիշեալ համառօտ քննադատականէն անշուշան կարելի է եղրակացնել. թէ Լագուարթ, Գոնազմ և Լիգուրիոն չեն համանիշ բառեր, որով և ոչ մի և նոյն հանքերը, այլ առանձին ու ապրել:

Հ. Ս. ԵՐԵՄ.

### Շարայարելի



## ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

~~~~~

( շար. տես էջ 401 )

\* « Լինգիրոն. ակն ինչ պատռւական. ըստ նախնեաց՝ կարծէ դոյցեալ ի մրգէ Յովազի, (իմա Լուսան) որ այն ինքն է Lince անուանեալ կենդանին »: Քանիշան Հայ-իտ. բառ: իսկ Հայկաշ. կը դրէ: « Լինգիրոն... բառ յն կրնուրիոն (որպէս թէ մէկ կամ ազի լինդ կենդանույ կամ յովազի) »:

\*\* Մինէկ կը դրէ « Ligure... Quelques-uns on prétenda que c'étais la même que lynxius, ou pierre de lynx, qui se forme, dit-on, de l'urine du lynx... Mais cela est fabuleux »:

\*\*\* Այլ հանքին վրայ գորուած էր Գադայ անունը :

\*\*\*\* Ականց դրբէ հեղինակը մանրամասն կը նկարագրէ Լաժվէրտի յատկութիւնը, արդ եթէ Լաժվէրտը [Լազուրիթ] նոյն ըլլար այն առասպեկան գոյութիւն ունեցող հանգին հետ, նա իւր աչքէն շշը վրիպեցներ այդ առասպեկներն, քանի որ ամէն հանքերու մասին եթէ առասպեկ մը կայ զայն զարդարելով նկարագրած է, բայց միայն յետապահ նկարագրութիւնն կ'ընէ. և Յաղագ գիտորդեան Լաժվէրտ բարին ։ ։ Այս եւս առան ունեն, և որ ինչ բարեգոյն իցէ՝ այն է, որ քար բազում ընդ ինքնան խառնեալ ոչ իցէ, և զգեցին հետանից նորին աչ կարիցն առեսանել և ամենայն որ դառգոյ և անուշ երանդ և ի նմա սպիտակ քար առկաւագոյն իցէ, այն տեսակ լաւագոյն է: իւր մատէն նորա է ի յերկիրն Պէտէրչանի » Եթայ կը յիշէ Լաժվէրտը բժշկական զանազան յատկութիւնները :

Ա.ՄԱՍԻԱ. — Երբեմ հոչակաւոր քաղաք Փոնտոսի Երկրորդ Հայոց սահմանին մօտ, և այժմ զիսաւոր քաղաք համանուն գաւառի: Եկինկոսայ 33° 32' արեւելեան երկայնութեան և 40° 39' հիսոսիսային լայնութեան մէջ, 72 հզմ. Եւզոկիային և 147 հզմ. Սեմաստիային հեռու, զրիթէ նոյն ուղղութեան վրայ: Հաղորդակցութիւն ունի այս կրիին քաղաքաց և Սեւ ծովու հետ՝ Սամսոնին Խարբերդ եղած կառազնաց ճանապարհով: Քաղաքը բարձր է ծովու մակերեսութիւն 405մ: և կը տարածուի արեւմուտք արեւելք, սեղմուած յութի բուսականութեանը զարդարուած հովտի մը մէջ, զոր կը կազմեն Քայլէ-տաղը և Զախարի յերինց:

Քանան և հինգ զարերէ ի վեր ծանօթ Ամասիան, այն սակաւազիւա քաղաքներէն է, որ

կրցած են իրենց անունը երկար ժամանակ՝ պահել ամփոփուս։ Ըստ պատմութեան և աւանդութեան հիմուած է Մբեճին Աղեքասին զրի Ամասիա անուն հօրեղորէն։ Եսա ժամանակ անցնելէ վերջ, մեր Մբեճին Տիգրանայ քեռայրն Միհրպատ, որ իր աներէն կողման պետ զրուած էր Մածակ քաղաքին մէջ, կու զայ կը զրաւէ Ամասիան և այսպիսով կ'անցնի Հայոց իշխանութեան ներքեւ։ Միհրպատ քաղաքը ընդարձակելով արունիքը կտոսոյց զետին հիւսիսյին կողմէ քարավեռնակին ստորոտը, և Շամիրամայ նման շինել տուաւ նաեւ քարակոփ շիրիմենք, առնդիւածեւ ճանապարհներ և զանձուց քարայրներ։ Ըստ պատմէն, այդ քարայրները զանձերով լցցնելով բաւական տարիներ տիրեց Միհրպատ մինչեւ Պոմպէոսի զալուստը, որ պատերազմիլով յազմեց և քաղաքիս տիրեց։ Երբ Պոնտոսը հովվէմական զաւառ դարձաւ, Ամասիա անոր մետրապոլիսն կամ մայրաքաղաքն անուանուեցաւ։ մեր հին պատմազրի համեմատ, այդ ժամանակ քաղաքը « . . . լի էր ամենայն չարեօց և պաշտամարդը սատանայի, մինչեւ ի կենարը քարոզութիւն առաքելոցն՝ յորում բազումը հաւատացին ի Տէր»։ Յետ ոչ սակաւ ժամանակաց զարձաւ Տրապիկոսնի Յունաց տէրութեան զիխաւոր քաղաքներէն մին, և ապա կոտենենաց ձեռքն անցաւ Ալեյուիկանց։ Տրապիկոսնի Յունաց տէրութեան ամբողջական կործանումէն 65 տարի վերջը, 1897 թուականէն ի վեր Ամասիա դարձած է օսմանեան տէրութեան անուանի քաղաքներէն մին։

Պայագիս Եղտուրմի ժամանակ Լէնկ թիմուր իօթը ամիս քաղաքը պաշարեց և ամուռ զրից պատճառաւ չկարենալով տիրել, յարձակեցաւ մերձակայ զիղերու վրայ և բոլոր քանակիները սրէ անցուց։ 472ին Ամասիա վերստին վտանգի մէջ ինկաւ Ուզուն-Հասանին, բայց Մահմէտ թէ որդին Մուստաֆա, որ տեղույն իշխողն էր, զօրեղ յարձակմամբ մը թշնամեաց բանակը ցրուելով քաղաքը պաշտեց։

Իրիս (Եւլիլ ըրմաց) զետը քաղաքիս միջն անցնելով, կը բաժնէ զայն կրկին մա-

սանց։ Երեւելի շէնքեր, եկեղեցիներ, մէկիթաներ, շուկայն, և այլն, կտուցուած են զետոյն հարաւային կողմը, իսկ հիւսիսյին կողմի շէնքերէն նշանաւոր են Զիյա պէյի վայելուց շինած կառավարութեան պալատը և հասարակաց ժամացոյցի աշտարակին։ Խրիստ վրայ տեղ տեղ քարաչէն և փայտեայ կամուրջներ ձգուած են, որոնք կը միացնեն քաղաքին երկու մասերը։ Գետա՞ր որ Ամասիյոյ մեծ զեղեցկութիւն և նկարչական տեսարաններէ զատ կ'ընծայէ նաեւ առատ ձեռնիք, ունի նաեւ իսր փամսները։ Գարնան և աշնան անձեւաց յաճախութեամբ ջուրը բարձրանալով կ'ողողէ մերձակայ պարտէզները, փողոցները և տները, տարուան մէջ քանի մը անձ ալ մէջը կը խզուին։ Պարտէզը և այս փատանց հրաշալի տեսարաններով կը տարածուին գետոյս երկու կողմերն, որոց ջուր կը մատակարարուի իրիսի վրայ հաստատուած ջրարաշիական դոյլակիր անհիներով։ Գետոյս վրայ կառուցուած են բաւական թուով ջաղացներ, որոց մէջ ամենէն զերազանցն է կերմանացի Պ. Մէցինը, որ ունի նաեւ մետաքսի թել հանելու և որորելու ընդարձակ գործարան։ Գիտական գարուս լուսաւորութիւնն և զարգացումն եթէ մուտք գործեն Արեւելու, թէ՛ Ամասիա և թէ իսր նման ուժից քաղաքներ, շատ օգուաներ կրնան քաղաքներն անցնող գետերէն։

Փողոցները ընդհանրուպէս ծուռ ու մուսեն, անկանան ու նեղ, միայն Սափայիտի թաղը քիչ մը լայն է բայց զար ի վեր։ Ռնի շատ աղբիրներ, որը թէպէտ ոչ այնշափ պազ, բայց թեթեւ և համեղ ջաւր սրին, և կը կոչուին Ամեմալի, Թէկմէլեր, Սօվոց բունար, Փաէկ բունար։ բոյց տեղ տեղ կը խմն նաեւ զետի ջուրը։ Քաղաքիս բնակչաց թիւն կը համարուի 30000, մերձաւորապէս բաժնուած հետեւել կերպով։

|                     |   |   |                   |
|---------------------|---|---|-------------------|
| Մահմէտականք պէճնիք  | • | • | 43300             |
| » շինք              | • | • | 6500              |
| Հայք լուսաւորչականք | • | • | 9760              |
| » Կաթոլիկք          | • | • | 240               |
|                     |   |   | Գումարն.... 30000 |

Հայոց եկեղեցիք երեք են ա. Ա. Նիկո-  
ղայոս՝ ուր է առաջնորդարանը. թ. Ա. Յա-  
կոբը՝ զրեթէ առաջնոյն կից, կառուցուած  
ԽՄՊ. (= 1841) թուին, աւելի ընդարձակ  
է և փառաւոր. գ. Ա. Աստուածածիկն Սա-  
վայիտի թազր բարձրապիր և գեղեցկաշէն,  
կառուցուած ԽՄՊ ( = 1804) թուին, որոյ  
ներքին որմոննը, սիներն և առաստաղը  
նկարուած են սրբազն պատկերներով. Այս  
եկեղեցիներն ունին զեղեցիկ զրիւր և բա-  
ւական բնվարձակ խաչքաներ, ծառեր և  
սենեակներ. իրաքանչիւր բակի մէջ կան  
երկսեռ ծաղկոցներ.

Մգկիթներու մէջ ամենն շրեղն և հոյա-  
կապն է Այուղան Պայազիու Իրիսի եղերը,  
կրկին մինարէով, կճեայ սիներով, արտ-  
բական նկարներով և բանդակներով, մա-  
նաւանդ ընդարձակ հրապարակովը և գեղե-  
ցիկ զիրովը. բակին մէջ կան մեծամեծ նոնի  
ծառեր և մէկ կորմը ընդարձակ վարժարան  
մը. Նշանաւոր է նաեւ մանաւանդ հնու-  
թեամբը կեօք մեռէսկ ըսուած մկիթը՝  
քաղաքին արեւմտակաղմը, զոր ումանիք կը  
համարին թէ ժամանակաւ եկեղեցի եղած  
ըլլայ. ունի ինը զմբէթ և զրսի զրան բով  
մաս մ'ալ աւերակ: Թէպէտ այժմ անզործա-  
ծելի է, սակայն թուրբերը մեծապէս կը պա-  
տուեն այս տեղս, որ իրենց կանանց համար  
ուխտատեղի զածած է. վասն զի ներուը զրան  
մօտ ձախակողմը քարէ կամարաշէն զետա-  
փոր տեղույ մը մէջ փայտէ զագաներով կը  
պահուին երկու մենելց անփոււ մարմինը և  
երրորդի մը ոսկորմիրը՝ զորս ամէն մննողաց  
ծորագրութեամբ և աղօթիք կը ցուցընեն,  
բայց չե. զիտցուիք թէ որոց են այդ մար-  
միները: Կեօք մէտրէսէր զիմացն է Ղլիճ  
Ալյանն փառաւոր մահարձանը՝ սեւ կճեայ  
կափարիչով և արձանագրութեամբ. ասոր  
մօտ կան նաեւ ուրիշ շիրմներ, զորս կը  
համարին թէ ըլլայ անոր կնոջը և որդւոց:  
Թիմարիսանն կամ Յիմարանոց անուամբ  
սինազարդ նշանաւոր աւերակ մը կայ կա-  
ռավարաւթեան պալատին զիմացը, իրիսի  
հարաւակողմը, որոյ զրան շրջանակը զար-  
դարուած է արարական մանր քանդակներով  
և զրան կայ արձանազրութիւն. ներսը կան-

գուն մնացած սենեակներն արքունի ամրա-  
րանոց ըրած են: Բայտ աւանդութեան, այս  
է եղեր ժամանակաւ Ծեայ մօրն շաստուա-  
ծոց մենակնը, զոր հրձիք ըրաւ Ա. Թէւղորոս  
զինաւորը: Շինուածոց մէջ նշանաւոր են  
նաեւ բազմաթիւ երեւելի թրբաց աները  
և Զախարի լերան կողմի հովանոցները (Քէօշը):  
Բաւական մաքուր, վրան զոց և ձեւաւոր է  
բազացիչ շուկայն, որուն մէկ մասը 488 5ին  
կրակով մը այրեցաւ: Թաշխանք՝ ուր է  
մաքսատունը և փանառականաց սենեակները,  
բոլոր շուկային մէջ միակ բարաշէն և նշա-  
նաւոր կերտուածն համարուած է: Պէտքա-  
տէնք՝ որուն վրայ գոմիստիք կը խօսին  
նախկին ուղեւորը, անգործածելի է և աւե-  
րակաց կարգն անցած: Գիր. Այրուանձտեանց  
քաղաքիս Հայոց զարոցաց վրայ զգոցու-  
թեամբ կը գրէ, և կը յիշէ և ուսումնարան  
Ներսիսեան. 1 երկսեռ վարժարան Մեսրո-  
պեան, 3 ծաղկոց մանկանց և 2 ծաղկոց  
աղջկանց: Թէեւ Ամասիոյ գաւառին օգը  
բարեիան է, սակայն քաղաքս խոր ձո-  
րամէջ լինելով ամառը սաստիկ տաց կ'ընէ  
և յաճախ տենզի հիւսնողովիւն կը տիրէ,  
այս պատճառաւ բնակչաց մեծամասնութիւնը  
կը ստիպուի բնակիլ զեղազուարն պարաէզնե-  
րու և այդիներու մէջ: Զերմաշափը ամառը  
շուրփի մէջ կը բարձրանայ մինչեւ + 38° հա-  
րիւրամասն, և ձմեռը կ'իջնայ մինչեւ - 10°  
հարիւրամասն. այս բարձրագոյն և սասրին  
աստիճաններէն զատ, շատ անզամ կող-  
մանցց կիմայն փոփսիսութիւններ կ'ունենայ,  
որուն պատճառն են շրջակայ բարձր լեռ-  
ները:

Ամասիոյ մէջ տեղական պիտոյից համար  
ամէն տեսակ արհեստաներ կը գտնուին, ո-  
րոնց ընկանարաւից Հայոց ձեռքն են: Ճար-  
տարարսւեստից, բերոց և բանուէ փանառ-  
կանսւենան վրայ որովհետեւ պիտի խօսինք  
համանուն գաւառի նկարագրութեան մէջ,  
այժմ անցնինք ակնարի մ'ալ տալ հնագար-  
եան մի քանի մնացորդաց վրայ, որը իբրև  
յուշարարը հնոյն Ամասիոյ մնացած են մին-  
չեւ ցարդ և տեսողաց վրայ հիացումն կ'ազ-  
գնեն: Քալէ-ատազի որ բարձրացած է քա-  
ղաքի հիւսիսակողմը, իւր գաղաքան վրայ

կը կրէ հնաշէն բերդի և պարսպաց աւերակէները. ինչ որ կը տեսնուին աւերակիներէն , բերդ զուրկ է մեծագործութենէ, և չենց կարող հաւաստեաւ ըսել, թէ Միհրդատէն շինուած ըլլայ: Աւելի աշքի ինկող և նշանաւոր

սիսէն հոսող թերախան զետը: Ըստ ոմանց այդ ճանապարհով պաշարման ժամանակ ջուր կ'առնէին, և բառ այլոց զաղուազի մը համարուած է: Ճշամպուշայի մուտքի զեմացն է յանցաւորաց գուբը՝ որ Ամասիա



Ամասիա

է բերդի մէջ շինուած ջրամբարը՝ զօր տեղացիք Ճշամպուշա կ'անուանեն: Խոտորնակի կամա ի շեղ կամարաձեւ ստորերկրեայ ուղի մ'է սանդուխներով, որ զրեթէ մամ մը կը տեւ և կիշնայ մինչեւ քաղաքի արեւելեան հիւ-

զնտանը անուամբ ծանօթ է ամէնուն: Խորոթիւնն է վեց կամ եօթը մետր, ուր կիշեցնէին չուանով յանցաւորը և վրան քառակոսի խուփով կը գոցէին: Գրեթէ 35 տարի առաջ վերոյիշեալ բերդը շին կը բեր-

դապտահ քալէի անուանեալ բնակիցը հոն կը բնակին և ազտո էին ամէն տեսակ հարկատութենէ և զօրը տալէ, թերզի արտաքին զրան մօտ սենեկի մը վերնատան մէջ ամփոփուած կը պահուէին հին զրահներ և նստեր, տեսակ տեսակ ձեւերով սաղաւարտներ, լանջապանակներ, շղթայշար զրահներ, ձիոց զիհանոցներ, և այն, ամէնքն ալ երկաթէ, որոց և ոչ մին մնացեր է այժմ. Զիյապէլ անունով Միհմասարիփը՝ որ երեւլի է իւր բազմաթիւ բարեկարգութիւններով և շինութիւններով, այս հութեանց կարեռորապյն մասը դրկած է ի կ. Պօլիս: Թերզին մէջ կան մի քանի թուրքերէն արձանազութիւնց. կան նաև յունարէն արձանազութիւններ, զորս բազաքի ուրիշ մասանց մէջ գտնուածներու հետ հրատարակած է Հ. Ներսէս Սարգիսեան:

Նոյն լերան բազաքի կողմը նայող երեսի վրայ կրինակամար և բառակուսի դոներով փորուած բարյայներ կան, և ճայտերու վրայ փորուած սանդուփներ, այդ բարյայները եւնելու և իջնալու համար: Այսպիսի բարյայներ և սանդուփներ կան նաև բազաքի հարաւային, արեւելեան և արեւմտեան կողմերու ժայռերուն վրայ: Այս բարյայներէն եթէ ոչ ամէնքը՝ զէթ մեծամասնութիւնը, մացորդը են անշուշտ մեզ արդէն ծանօթ Միհրզատոյ գանձուց համար փորած բարյայներուն: Գիտնականներէն եղան շատեր, որք այս բարյայներուն և Պերսեպոլի թագուրական շիրմաց մէջ մեծ նմանութիւն փոներով, համարեցան որ եղած ըլլան ժամանակաւ Մարտ թագաւորաց գերեզմանը: Գալէ-տաղիի մէկ կողին վրայ ալ զեկ յարեւելու կայ գեղեցիկ թէքրէտ (Անբը) մը, շինուած Շիրվանզատէ Ծիշտի փաշայէն, որ Սուլթան Ազիզի օրով կ. Պօլիս մէջ մեծ եւ պարզու էր, բնիկ Ամասիացի, որոյ ծնողը Շիրվանէն (Աղուանը) զաղթած եկած են ելեր հօս: Յէշեալ եպարցոսի ծնողաց մարմնը կ'ափոփուին սոյն թէքրէտ մէջ, ուր Թուրք աղօթողաց և այցելուաց համար շինուած են կանոնաւոր սենեակներ. ամբողջ շնչը պարսպապատ է, ներոց ծառազարդ, զիրքը հովասոն և բարձրազիտակ:

Յոյժ նշանաւոր է բաղաբին արեւելակողմը Այնալը մաղարա բարայը՝ որ ձեւով նման է միւսներուն, բայց ներու և մասամբ մ'ալ զուրսը ապակի բռով ծեփուած ըլլալով, այնքան փայլըն է եղեր որ դրսի բոլոր տեսարանները իրեն ի հայելով ցոլացմամբ կը տեսնուին եղեր. այժմ խաւարամած է և ծուփով սեւած: Կը պատճեն թէ փաշա մը ձիով զիմացն անցած ատեն, ձին իրտչիր և զինքը գետին զարկեր է, այս պատճառու նոյն փաշան յարդ զառելով տալով, թանձր ծխով սեւցուցեր է: Այրիս մէջ ըստ հին ուղեւորաց կան եղեր շատ նկարին պատշերներ, ինչպէս նաև կամարին վրայ զեռ կը նշմարուին երկուասան Առաքելոց պատշերները, և դրսէն ալ նակտին վրայ յունաբէն արձանազութիւն մը: Կը կարծուի թէ այս կանխաւ եղած ըլլայ զանձատուն կամ մեշեան և բրիտանէութեան ժամանակ եկեղեցւոյ փփուած: Տրապիզոնի թագաւորաց տաեն բաղացը կար Յունաց հոչակաւոր և պիսկոպոսարան: Հայք եւս ունին եպիսկոպոսարան, որոց Առաջնորդպական տեղապահ է այժմ Նիկողոյոս Վր. Ֆրաննիկվեան: Քաշաց հայրենիք է Սարաբան մեծ աշխարհաբէն, և բրիտանէութեան առաջին զարուց մէջ մեզ ընծայեց զուրբը Թէկողորոս զինաւորը:

Աւստանաւոնիք. — Այնալը մաղարայի զիմացը գետպն միւս կողմը է Ամասիայ թասիլիս եպիսկոպոսին գերեզմանը, զոր յիշէ խորենացին (Բ. 26). առաջ այստեղ եկեղեցի է եղեր, իսկ այժմ կայ միայն բարակոյս մը: Քաղաքին Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ պահուած ձեռագիր Յայսմաւուորքի մէջ կը յիշուի, թէ սուլթան Մուրատի ժամանակ Խըսըրը անունով փաշա մը բակելով ուփատաղելոյս եկեղեցւոյ մացած հիմունըը, յայտնուոր են Ս. Բատիլիոսի նշանարները խորանին տակը, զոր վերստին ծածկելով նոյն տեղը պահած են: Ս. Յովհաննես, բազաքին ժամ մը հեռու բարայր մ'է և միջն ջուր կը բզին, ուր կը յանախին տեսնզի ափացանախները. այստեղէն զտած են Ս. Յովհաննու կարապետի զլուխը: Խամի անունով ուփատաղելի մըն ալ կայ Մարզուանու և Ա-

մասից մէջտեղ, որոն համար կ'ըսն, թէ Ա. թէոգորոսի սպաննած վիշտակին գերեզմանն է:

Վերոյիշեալ Ա. Յովհաննու աղքիւրէն ժամ մը հեռու զարմանաց արժանի է Միհրդատայ ջրանցքը որ լայն առու մ'է կոաննահարուած պատուափ լերան երեսը մարդաշփ բարձրութեամբ. երկանութիւնը կը տեւէ կէս ճամէ աւելի, և այժմ աւերակաց կարգն համարուած է, զոր թուրքերը Ֆեհրտա եափոստ կը կոչեն:

Համանուն ԱՄՄՍԽԱ գաւանն կ'ինկնայ Այերաստիոյ նահանգին հիւսիս-արեւմտեան կողմը, Գրզր-ըրմազ գետոյն, Քասթմաղոյի, Ցրապիկոնի և Ալիկրիոյ նահանգաց և Եւղիիա գաւանի մէջտեղ: Այսողջական ասարածութիւնն է 29450 քր. հզրմ կը բաժնուի 8 վիճակաց, և ունի 1204 գիւղեր: Գաւանիս բնակչաց թիւն է 259600, բաժնուած հետեւեալ կերպով.

|                               |        |
|-------------------------------|--------|
| Սահմէտականք սիւննիք . . . . . | 132000 |
| » շինք . . . . .              | 66000  |
| Հայք լուսաւորչականք . . . . . | 44000  |
| » բուղքականք . . . . .        | 5500   |
| » կաթուկիք . . . . .          | 1100   |
| Ցոյնք . . . . .               | 11000  |
| <hr/>                         |        |
| Գումարն . . . . .             | 259600 |

Դպրոցաց թիւն է 967, և աշակերտը 8840, յորոց Հայք ունին 314 դպրոց և 2000էն աւելի աշակերտ:

Երկրագործութիւնն. — Օսմանեան Ասիոյ ամէնէն աւելի արգասարեր երկիրն է Ամասիոյ գաւանն Բուստական ամէն տեսակ բերբեր առատովմեամբ առաջ կու գան, չնորոհիւ լեռներէն հոսող Գրզր-ըրմազ և Եղիշ-ըրմազ գետոց օսմանցակ բազմաթիւ գետակներու երկիրն շորութենէ աղատ է, Նշանաւոր են ցորենն, ափինն, կանեփն, պամիսն. առատովմեամբ կը մշակուին ամէն տեսակ պտուղներ, զիլաւորարար Ամասիոյ հովտին և քաղաքին հոչակուած պարտիզաց մէջ: Անզուգական և հոտուէտ խնձորներն, տաննձն և սերկելին և սալորն մեծ քանակութեամբ կը զրկուին է. Պոլիս: Առանց ուղելու երկարել մեր խօսքն ուրիշ պաղոց և բերոց վրայ, կը

դնեմք առա միջին հաշուազ, գաւառիս տարեկան բերբերու ցանկն և քանակն:

|                                      |                  |
|--------------------------------------|------------------|
| Յորէն . . . . .                      | 35 000 000 հուայ |
| Դարբ . . . . .                       | 45 000 000 »     |
| Հաճար . . . . .                      | 3 000 000 »      |
| Վարսակ . . . . .                     | 95 000 »         |
| Եղիպատացորնեն . . . . .              | 50 000 »         |
| Կորեակ . . . . .                     | 4 000 000 »      |
| Բրինձ . . . . .                      | 250 000 »        |
| Բակլայ . . . . .                     | 67 500 »         |
| Լուքիա . . . . .                     | 1 150 000 »      |
| Ուպ . . . . .                        | 900 000 »        |
| Ալեսու . . . . .                     | 1 500 000 »      |
| Պամիա . . . . .                      | 973 020 »        |
| Խաշող . . . . .                      | 4 000 000 »      |
| Խնձոր և տանձ . . . . .               | 10 000 000 »     |
| Ջանաղան պատուղներ . . . . .          | 44 000 000 »     |
| Գաղի խէժ . . . . .                   | 34 500 »         |
| Մեղրապ (սալէպ) . . . . .             | 40 000 »         |
| Դեղին հոււնա (Graine jasne). . . . . | 150 000 »        |
| Ծիսիսու . . . . .                    | 60 000 »         |
| Անիսոն . . . . .                     | 800 »            |
| Ակիսոն . . . . .                     | 2 300 »          |
| Խաշուաչի հոււնա . . . . .            | 100 000 »        |
| Մոմ . . . . .                        | 7 000 »          |
| Մեղր . . . . .                       | 1 000 »          |
| Պրոն (Բէֆֆիկ) . . . . .              | 34 000 »         |
| Նուշ . . . . .                       | 1 000 000 »      |
| Զոր խաշող կամ Զամիչ . . . . .        | 600 000 »        |
| Գինի . . . . .                       | 15 000 000 »     |
| Խոռոչ (պէքմէշ) . . . . .             | 2 400 000 »      |

Գումարն . . . . . 91 884 500 հուայ  
Կամ մերձաւորապէս 106 միլիոն հազարազման:

Տարուան մէջ միջին հաշուազ կենացանիւներէն առաջ կու գան

|                       |                           |
|-----------------------|---------------------------|
| Եղ և կով . . . . .    | 20 000 գլուխ              |
| Զի . . . . .          | 10 000 »                  |
| Եշ . . . . .          | 4 000 »                   |
| Աչխար և այծ . . . . . | 171 650 »                 |
| <hr/>                 |                           |
| Գումարն . . . . .     | 205 650 գլուխ կենացանիւն: |

Արուեստական արտասրութիւնն. — Գաւառին զիխաւոր արուեստներէն մին է ուստայնան կութիւնը: Այս արհեստը որ բոլորովին տանկան է, զիխաւորարար Ամասիա բազմացին մէջ 2500 արհեստաւորներ ձեռքով կ'աշխատին, և Մարզուանի մէջ զրեթի 3000 կանայք և աղջկունք իրենց տանց մէջ կ'ա-

խատին։ Գործածներն են 9 կանգուն երկայն պատառներ, ճերմակ, կարմիր և կապոյտ գծերով՝ զորս կը վաճառեն Անկիւրիոյ նահանգին մէջ։

Արուեստներու երկրորդ ճիշտ մ'ալ է աշխիքի վաճառականութիւն, որ 38 տարիներէ ի վեր մտած է այս կողմերս զուգեցրացի Պ. Քրուկի ձեռքով։ Առաջին տարիները թէվետ այնչափ բնդունելովին չգտաւ այս արուեստը ստացած է այժմ Ամասիս և իւր շրջակայըը տարին 450000 պարկ ալիք կը հանեն Մեծամանութիւնն կը պատուի ի Սամոն, Պաֆրա, Զարշամբա. 30000 պարկ ամէն տարի կը դրկուի Սեւ ծոփու այլ և այլ նաւահանգիստները։ Ենթամարուեծութիւնն ժամանակաւ յոյժ ճադիկած էր յԱմասիս և տարին գրիեթ 7էն 800000 հազարարամ խոզակ կ'ենիւր։ Ենթամարուեծութիւնն ակսելէն վերջ, այս արուեստը շատ ինկաւ, և տարեկան թերքն իշաւ 30000 հազարարամի։ Բայց յորմէ հետէ մուտքորդութիւնը է Փամբէտոյ զրութեամբ ծուարերութիւնը, վերսուին սկսու բարգաւաճիլ և 1890ին ունեցան 80000 հազարարամ, և այժմ զեռ աւելի շատցած է։ Մեծ օգտակարութեամբ նորոգ հաստատուած են Ամասիսոյ մէջ նաև երկու զտարան։

Գաւառին մէջ կան զանազան տեղեր հանքային ջրեր, և տեղ տեղ այ երկաթի, պղնձոյ և արծաթախառն կապարի հանքեր, որոց երկուքն շահագործած է տէրութիւնը։ Ունի կաղնիի և փիճի գեղեցիկ անտառներ Լաթիէի շրջակայը։ Թափշան-տաղի բարձանց վրայ Մարզուանու, Համբ-քեօյի և Ղավզայի վիճակաց մէջ եւս նոյն տեսակ ծառոց անտառներ կան, ինչպէս նաև Արտադի վրայ, Այս անտառները լի են կենդանիներով և թշուններով։ Նապաստակները այնչափ շատ են լեռներէն միոյն վրայ, որ իրենց անուամբ նոյն լեռը կոչուերէ թափշան-տաղ (նասպատակաց չեն)։ Կան նաև եղջերուներ և կինճերու երամակներ. արջն եւս սակաւազիւտ չէ, գայլ, աղուէս, լուսան, սամիյր, սամար եւս կը զտնուին. Պակաս չեն կացանիերու խմբեր, փասիան, կոցար,

սազ, վայրի բաղ, արօս և ուրիշ որսի մանր թոշուններ։

Վանաւականութիւնն. — Ամասիս գրանուելով Պաղտատի մեծ ճանապարհի վրայ, միշտ նշանաւոր եղած է իւր բանուկ վաճառականութեամբը, մանաւանդ երբ ցամացային ճանապարհով կ'երթեւեկէինի կ. Պոլիս. այժմ եւս Պաղտատէն ասվեն զտնուած քարցաց վաճառքներն եւ, մարզիկ այս գծով կ'իշնեն ի Սամսոն, որ գաւառին վաճառական շարժման զիմաւոր և միակ նահանգիստն է։ Այժմ զաւառո միջին հաշուով տարին վաճառքներ կը զրկէ և կ'ընդունի, հետեւեալ ցուցակաց համեմատ.

#### ԱՐՏԱՌՈՒԹԻՒՆ

| ԱՆՈՒԱՆԸ ՎԱՃԱՐԱՑ     | ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ<br>ԿԱՄ<br>Ա Հ Ի Ա | ԱՐԺԵՆ<br>ՖՐԱՄԿՈՎ |
|---------------------|-------------------------------|------------------|
| Յորեն . . .         | 25000 ակոչ .                  | 250000           |
| Դարե . . .          | 20000 »                       | 160000           |
| Ալիւր . . .         | 100000 պարկ                   | 1540000          |
| Սիւնեռն . . .       | 700000 հըդդ.                  | 105000           |
| Դեղյոն հունտ        | 1879 »                        | 1725             |
| Ավինոն . . .        | 300 »                         | 18000            |
| Խաշխաշի հունտ       | 20000 »                       | 10000            |
| Գազիկ իչժ           | 23960 »                       | 45425            |
| Մեղրապ              | 1704 »                        | 3680             |
| Պաղպաներ . . .      | 20658000 »                    | 2500000          |
| Կանաչչէլէնք . . .   | 600000 »                      | 70000            |
| Խաղող . . .         | 400000 »                      | 35000            |
| Կարագ . . .         | 40000 »                       | 46000            |
| Մոմ . . .           | 5556 »                        | 5980             |
| Մեղրը . . .         | 400 »                         | 1200             |
| Բուրդ . . .         | 140000 »                      | 100000           |
| Պուն (թիֆթիկ)       | 29000 »                       | 52000            |
| Ճարագու (Swif)      | 50000 »                       | 47000            |
| Գինի . . .          | 100000 »                      | 50000            |
| Բուռփ . . .         | 4000000 »                     | 250000           |
| Ուլսար . . .        | ?                             | 100000           |
| Ջի . . .            | ?                             | 15000            |
| Այծու Մորթ          | 40000 կոտդ.                   | 65000            |
| Կովու . . .         | ?                             | 30000            |
| Եղան . . .          | ?                             | 60000            |
| Ալիսար . . .        | 40000 »                       | 72000            |
| Գաւան . . .         | ?                             | 50000            |
| Նապաստակի . . .     | 8000 »                        | 2960             |
| Ջրշան . . .         | 40 »                          | 4000             |
| Ամասարի . . .       | 400 »                         | 630              |
| Ամոյրի . . .        | 500 »                         | 4500             |
| Աղուեռն . . .       | 1500 »                        | 34500            |
| Ենութեան փայտ . . . | ?                             | 10000            |
| Գորգեր . . .        | ?                             | 150000           |

Գումարը 8752300

## ՆԵՐՄՈՒԽՈՒԹԻՒՆ

| ԱՆՈՒԱՆ         | ՎԱՃԱՐԱՑ | ՎԱՃԱՐՈՂ           | ՏԵՂԵՐԸ              | ԱՐԺԵՔՆ<br>ՅՐԱՎԵԿ |
|----------------|---------|-------------------|---------------------|------------------|
| ԲՐԻՆՃ          | .       | .                 | Թուստիա-Պայտապատ    | 66132            |
| ՕՇԱՐ           | .       | .                 | Այնթաղ-Անտիք        | 43125            |
| ԼԵՂԱԿ          | .       | .                 | Մարտիլիս            | 15000            |
| ԵՐԿՈՉ          | .       | .                 | Շուէտ-Ռուսիա        | 104100           |
| ԱՆԱԳ           | .       | .                 | Մարտիլիս            | 7027             |
| ԶԵՄ            | .       | .                 | Քէրե-Մերտիլինէ      | 6210             |
| ՔԱՐԻՆ          | .       | .                 | Պաթում              | 64400            |
| ՄԱՄ            | .       | .                 | Մարտիլիս            | 2760             |
| ԱԿԱԿԻԵՆ        | .       | .                 | Գրեմանիս            | 12175            |
| ԱՆԵԼԻՆ         | ՆԵՐԸ    | .                 | Մարտիլիս            | 2900             |
| ՆՐԲԱՐԵՒՆ       | .       | .                 | Փաթում              | 30350            |
| ՇԱՔԱՐ          | .       | .                 | Թրիենթ-Մարտիլիս     | 49162            |
| ՊՈՎՐ           | .       | .                 | Մարտիլիս            | 74520            |
| ԲԱՄԲԱԿ         | .       | .                 | Առանա-Խաբը-Երդ      | 147200           |
| ԼԱՐԴԻ          | .       | .                 | Թրիենթ              | 62000            |
| ԹԻՎՈՂՅ         | .       | .                 | "                   | 42000            |
| ՄԱՆՐ ԵՐԿԱՄԵՐԵՆ | .       | .                 | Գրեմանիս            | 41000            |
| ՀՆԴՔԻ ԿԱՍՏԱՆԱԳ | .       | Մշչնչութեր-0-առես |                     | 200000           |
| ՔԱՄԵՐԾ ԿՈՎԱ    | .       | "                 | "                   | 50000            |
| ՉԱԼԱՎԱՐ        | .       | .                 | Գրեմանիս-Խուսիս     | 35000            |
| ՖԵՆ            | .       | .                 | Թրիենթ              | 16000            |
| ԿԱՐՄՐԻՄ        | .       | .                 | Մարտիլիս            | 43000            |
| ԵՐԸ            | .       | .                 | Կարմրին             | 25000            |
| ՌՈՒՄ           | .       | .                 | Առարիս-Ա. Ա. Երկաւա | 4200             |
| ԱԿԲԵՐ          | .       | .                 | Առարիս              | 1610             |
| ԳԱՆԵԿԱԿ        | .       | .                 | Մարտիլիս            | 3000             |
| ՕՐ             | .       | .                 | Զանագան աեղերէ      | 13300            |

Գումարի . . . . . 1063571

Գաւառիս զիխաւոր գետերն են Գրգրի-ըրմաք, Թռանանի-սուշ և Զերերէլ-լայ, որոց միախառնուելովը կը ձեւանայ Եղիշի-ըրմաք կամ Ամասիս գետը. միւս գետերն են Թէրսախս, Տիկի-լայ, Աղ-սուշ, և այն: Լեռներէն յիշենք Թէմեր-տաղ, Աղ-տաղ, Աղտաղ, Գէր-տաղ, Թէրսախս-տաղ, Զարալար-տաղը, Քայէ-տաղ, և այն:

Եպանօթ գէւպերու ժամանակ թէ՛ Ամասիս բաղադրի և թէ գաւառին մէջ Հայք կորուստ ունեցան 1000 է աւելի անձինք, տառներնին աւարեցին, ջրացաներ բանդեցին, և այլ ամէն անսակ իծղութինք ի գործ դրին: — Սոփերը, ֆջ. 55-63: Թռուս Աղրար, 39-67: Ճնապիր. ի Բարերուն, 5-8: Տեղագրութիւնը, 54-58: Քաղաքական աշխարհ. 553: Վ. Քիակ, Ա. 738-756:

Հ. ՍՈՒԽԻՄԱՆ ԷՓՐԻԿԱՆԱ

Հարայարելի

## ՊՐՈՊԱՏԻԿ

(Եար. տես էջ 307)

ՍՈՑԿ է թէ զիխաւոր պատճառն որոյ վրայ յենած կը մերժեն ոմանց թովհ. Եղիշինը երկու համարներուն վաւերականութիւնը՝ ձեռագիրը են. վասն զի բավանդակ բրիտանիայ աւանդութեան մէջ, բաց ի Բար-Երբէոսի տուած տեղեկութենէն, չկայ ձայն մը, որ մեզի տարակուսել տայ. որով թովհ հանուն նոյն անցից աննպաստ վկայութիւնը ի ձեռագիրս միայն են, զորս այժմ կ'ու զենք բննել:

Եղիշինը առանց մանրամասնութեանց իջնելու ուրիշ ազգաց ձեռագիրներուն յայսմ մասին բռնած ընթացքը:

Այս Յոյն չորս ձեռագիրը կը զտնուին որ երկու տառներն ալ չեն պարունակեր. գարձաւալ երկուց՝ որ Յ տանը չեն բավանդակեր, և երկուց՝ որ միայն կը. բաց ասոնցմէ քանանի մը չափ որ սոյն համարները մասամբ կամ ամբողջ՝ նշանաերավ կը ներկայացնեն. այն է ասուղանից (×) յորեկիք (օթելես) (÷) և •, §, այսպիսի ձևեր: Ահա ասոնց միայն են յունարէն Աւետարաններու 426ն 45 հազար ժանօթ օրինակաց մէջնէն՝ որ ինդրոյս հակառակ նժարին մէջ ծանրանալ կը թուին, որ և կարծենց թէ իրաւ ոչինչ են:

Եղիշինը կրնանք ըսկը լսախն ձեռագրաց համար որոց թիւը 20 հազարի ալ կը հասնին, և հետեւանց մը չի հանուուր եթէ երկու կամ երեց և ոյն իսկ տասն օրինակը չպարունակն Յ և Կ տուները կամ մին անոնցմէ: Ակացոյց մ'է այն թէ եղած են մի ցանի անձինց որ այդ տառներուն վաւերականութիւնը մերժեն են, կամ թէ այնպէս մեկնեն են յոյն օրինակաց աստեղանիշը: և չենց կարող միտել թէ այդ համարներն ունեցեր: Են երեխն, ինչպէս այժմ: իրենց